## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՒՌՆՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նուռնուս համայնք, nurnus.kotayq@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

« 11» սեպտեմբերի 2017 թվականի թիվ 64-Ա

## ԹԵԼՄԱՆ ՎԱՍԻԼԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ՔԱՆԴՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի և հիմք ընդունելով քանդման թույլտվություն տալու վերաբերյալ Թելման Վասիլի Հովհաննիսյանի դիմումը՝ որոշում եմ.

1. 1.Նուռնուս համայնքի վարչական տարածքում գտնվող, Թելման Վասիլի Հովհաննիսյանին սեփականության իրավունքով պատկանող (սեփականության վկայական N 25052016-07-0060) 07-051-0102-0027 կադաստրային ծածկագրով, բնակավայրերի նշանակության 0,0835 հա մակերեսով հողամասում մրգերի չորանոց կառուցելու նպատակով, նախագիծ պատվիրելու համար Հովհաննես Ալբերտի Հովհաննիսյանին համաձայն հաստատված նախագծի, տալ շինարարության թույլտվություն:
2. Պարտավորեցնել Հովհաննես Հովհաննիսյանին.

1) աշխատանքներն ավարտելուց հետո ավարտական ակտ տրամադրելու նպատակով

փաստաթղթերը ներկայացնել համայնքապետարան:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄՆԱՑԱԿԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

2017թ. հունիսի 15
գ.Նուռնուս

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՒՌՆՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նուռնուս համայնք, գ.Նուռնուս, nurnus.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 սեպտեմբերի 2017թվականի N 65-Ա

## ՍԻՐՈՒՇ ՕՀԱՆԻ ԱԼԱԲԵՐԿՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 10,11, 22.1 կետերի, 1998 թվականի դեկտեմբերի 31-ի թիվ 867 որոշմամբ հաստատված կարգի 5-րդ կետի և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ ու 22-րդ կետերի պահանջներով, ու հիմք ընդունելով Սիրուշ Օհանի Ալաբերկյանի կողմից իրեն պատկանող Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նուռնուս համայնքի ,,Ուրց,, այգեգործական ընկերության 11-րդ տեղամասի թիվ 12 հասցեի հողամասում 1989 թվականին ինքնակամ կառուցված S=279,58 ք.մ. մակերեսով շինությունների օրինականացման մասին դիմումը և այն, որ ըստ համայնքի կադաստրային քարտեզի, «Սամվել Ավետիսյան» Ա/Ձ-ի կողմից հաստատված հատակագծի ու տեղում կատարված ուսումնասիրության հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում, ինքնակամ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, որոշում եմ.

1. Սիրուշ Օհանի Ալաբերկյանի կողմից իրեն պատկանող Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նուռնուս համայնքի ,,Ուրց,, այգեգործական ընկերության 11-րդ տեղամասի թիվ 12 հասցեի հողամասում 1989 թվականին ինքնակամ կառուցված S=279,58 ք.մ. մակերեսով շինությունները համարել օրինական:

2.Հաշվի առնելով, որ S=18.37 ք.մ.մակերեսով այգետան նկուղը, S=102.64 ք.մ. և 21,39ք.մ մակերեսներով կիսանկուղները, 105,59 ք.մ.մակերեսով բնակելի տունը, 20,54 ք.մ.մակերեսով ավտոտնակը, 1,95 ք.մ.մակերեսով օժանդակ շինությունը և 9,10 ք.մ.մակերեսով պարիսպն ինքնակամ կառուցվել են 2001 թվականի մայիսի 15-ից առաջ, , ապա նրանց օրինականացման համար վճար չգանձել:

3. Սիրուշ Օհանի Ալաբերկյանին պատկանող 07-051-0101-0286 կադաստրային ծածկագրով հողամասին և այգետանը տրամադրել իրավաբանական հասցե. գ.Նուռնուս, ,,Ուրց,, թաղամաս, 11-րդ փողոց, թիվ 12:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄՆԱՑԱԿԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

13 սեպտեմբերի 2017թ
գ Նուռնուս

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՒՌՆՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նուռնուս համայնք, գ.Նուռնուս, nurnus.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

13 սեպտեմբերի 2017թվականի N 66-Ա

## ՌՈԲԵՐՏ ՎՈԼՈԴՅԱՅԻ ԻՍԱԽԱՆՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 10,11, 22.1 կետերի, 1998 թվականի դեկտեմբերի 31-ի թիվ 867 որոշմամբ հաստատված կարգի 5-րդ կետի և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ ու 22-րդ կետերի պահանջներով, ու հիմք ընդունելով Ռոբերտ Վոլոդյայի Իսախանյանի կողմից իրեն սեփականության իրավուքով պատկանող /սեփականության վկայական N 2513461/Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նուռնուս այգեգործական զանգվածի թիվ 194 այգեգործական հողամասում 2010 թվականին ինքնակամ կառուցված S=51,56 ք.մ. մակերեսով շինությունների օրինականացման մասին դիմումը և այն, որ ըստ համայնքի կադաստրային քարտեզի, «Գույքաչափ» ՍՊԸ-ի կողմից հաստատված հատակագծի ու տեղում կատարված ուսումնասիրության հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում, ինքնակամ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, որոշում եմ.

1. Ռոբերտ Վոլոդյայի Իսախանյանի կողմից իրեն սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նուռնուս այգեգործական զանգվածի թիվ 194 այգեգործական հողամասում 2010 թվականին ինքնակամ կառուցված S=51,56 ք.մ. մակերեսով շինությունները համարել օրինական:

2.Հաշվի առնելով, որ S=17.38 ք.մ.մակերեսով այգետան 1-ին հարկը, S=1.86 ք.մ. մակերեսով զուգարանը և S=32.32 ք.մ. մակերեսով ծածկարանն ինքնակամ կառուցվել են 2010 թվականին ապա նրանց օրինականացման համար համայնքի բյուջե վճարել՝ այգետան համար 19 118 դրամ և զուգարանի ու ծածկարանի համար՝ 22 558 դրամ, ընդամենը՝ 41 676 /քառասունմեկ հազար վեց հարյուր յոթանասունվեց դրամ:

3. Ռոբերտ Վոլոդյայի Իսախանյանին սեփականության իրավուքով պատկանող /սեփականության վկայական N 2513461/, 07-051-0129-0010 կադաստրային ծածկագրով այգեգործական հողամասին և այգետանը տրամադրել իրավաբանական հասցե. գ.Նուռնուս, ,,Կոտայք,, թաղամաս, 1-ին փողոց, թիվ 194:

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում նշված գումարը համայնքի բյուջե վճարելու պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄՆԱՑԱԿԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

13 սեպտեմբերի 2017թ
գ. Նուռնուս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՒՌՆՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նուռնուս համայնք, գ.Նուռնուս, nurnus.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 սեպտեմբերի 2017թվականի N 67-Ա

## ՌՈՒԶԱՆՆԱ ՏԻԳՐԱՆԻ ԽՍԱԽԱՆՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 10,11, 22.1 կետերի, 1998 թվականի դեկտեմբերի 31-ի թիվ 867 որոշմամբ հաստատված կարգի 5-րդ կետի և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ ու 22-րդ կետերի պահանջներով, ու հիմք ընդունելով Ռուզաննա Տիգրանի Խսախանյանի կողմից իրեն սեփականության իրավունքով պատկանող /սեփականության վկայական N 2498259/Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նուռնուս այգեգործական զանգվածի թիվ 193 այգեգործական հողամասում 2010 թվականին ինքնակամ կառուցված S=202,42 ք.մ. մակերեսով շինությունների օրինականացման մասին դիմումը և այն, որ ըստ համայնքի կադաստրային քարտեզի, «Գույքաչափ» ՍՊԸ-ի կողմից հաստատված հատակագծի ու տեղում կատարված ուսումնասիրության հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում, ինքնակամ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, որոշում եմ.

1. Ռուզաննա Տիգրանի Խսախանյանի կողմից իրեն սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նուռնուս այգեգործական զանգվածի թիվ 193 այգեգործական հողամասում 2010 թվականին ինքնակամ կառուցված S=202,42 ք.մ. մակերեսով շինությունները համարել օրինական:

2.Հաշվի առնելով, որ S=13.67 ք.մ.մակերեսով կիսանկուղը, S=8.8 ու 19,8 ք.մ.մակերեսներով բաց պատշգամբերը, S=32.38 ք.մ.մակերեսով այգետան 1-ին հարկը, S=75.17 ք.մ. մակերեսով ձեղնահարկը, S=35.68 ք.մ.մակերեսով լողավազանը, S=12.97 ք.մ.մակերեսով պարիսպը և S=3.95 ք.մ. մակերեսով աստիճանավանդակն ինքնակամ կառուցվել են 2010 թվականին ապա նրանց օրինականացման համար համայնքի բյուջե վճարել՝ պարիսպի, լողավազանի և աստիճանավանդակի համար 34 716 դրամ և կիսանկուղի, բաց պաշգամբների, 1-ին հարկի, ձեղնահարկի համար՝ 164 802 դրամ, ընդամենը՝ 199 518 /հարյուր իննսունինը հազար հինգ հարյուր յոտանասուն/ դրամ:

3. Ռուզաննա Տիգրանի Խսախանյանին սեփականության իրավունքով պատկանող /սեփականության վկայական N 2498259/, 07-051-0129-0012 կադաստրային ծածկագրով այգեգործական հողամասին և այգետանը տրամադրել իրավաբանական հասցե. գ.Նուռնուս, ,,Կոտայք,, թաղամաս, 1-ին փողոց, թիվ 193:

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում նշված գումարը համայնքի բյուջե վճարելու պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄՆԱՑԱԿԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

13 սեպտեմբերի 2017թ
գ. Նուռնուս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՒՌՆՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նուռնուս համայնք, գ.Նուռնուս, nurnus.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 սեպտեմբերի 2017թվականի N 68-Ա

## ՍԻՐՈՒՇ ՕՀԱՆԻ ԱԼԱԲԵՐԿՅԱՆԻՆ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սիրուշ Օհանի Ալաբերկյանի դիմումն և ղեկավարվելով ,,Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցված հողամասերի իրավական կարգավիճակի մասին,, 2002 թվականի դեկտեմբերի 25-ի Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներով ու նկատի ունենալով այն հանգամանքը, որ Սիրուշ Օհանի ԱլաբերկյանիN հատկացված 0,05հա հողամասից կադաստրային քարտեզագրման արդյունքում հաշվառված ավել օգտագործվող հողամասը նախատեսված չէ այլ նպատակային և գործառնական նշանակությամբ օգտագործելու համար, այն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության ինչպես նաև հնագիտական, պատմամշակութային հողերի պահպանման գոտիներում, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, որոշում եմ.

1.Ճանաչել Սիրուշ Օհանի Ալաբերկյանի սեփականության իրավունքն ըստ կադաստրային քարտեզագրման արդյունքների 07-051-0101-0286 կադաստրային ծածկագրով 0,0855հա մակերեսով բնակելի կառուցապատման հողամասի նկատմամբ, որը փաստացի նրա կողմից օգտագործվել է նաև մինչև 2001 թվականի մայիսի 15-ը:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄՆԱՑԱԿԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

13 սեպտեմբերի 2017թ
գ. Նուռնուս

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՒՌՆՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նուռնուս համայնք, գ.Նուռնուս, (0222) 6-84-51nurnus.kotayq@mta.gov.am

15 սեպտեմբերի 2017թվականի N69-Ա

## ԵՓՐԵՄ ՆԻԿՈԼԱՅԻ ՂԱԶԱՐՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ՓԱՍՏԱՑԻ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՆՐԱ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 10,11, 22.1 կետերի, 1998 թվականի դեկտեմբերի 31-ի թիվ 867 որոշմամբ հաստատված կարգի 5-րդ կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ ու 22-րդ կետերի, ,,Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին,, եփրեմ Նիկոլայի Ղազարյանի՝ իրեն պատկանող Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նուռնուս համայնքի ,,Սևան,, այգեգործական ընկերության 6-րդ տեղամասի թիվ 26 հասցեի հողամասում իրեն կողմից 1996 թվականին ինքնակամ կառուցված 77,76 քմ մակերեսով շինությունները և այգետնակը օրինականացման մասին դիմումը և այն, որ ըստ համայնքի կադաստրային քարտեզի, «Երիցուկ» ՍՊԸ-ի կողմից հաստատված հատակագծի ու տեղում կատարված ուսումնասիրության հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում, ինքնակամ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, որոշում եմ.

1 Եփրեմ Նիկոլայի Ղազարյանի կողմից իրեն պատկանող Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նուռնուս համայնքի ,,Սևան,, այգեգործական ընկերության 6-րդ տեղամասի թիվ 26 հասցեի հողամասում 1996 թվականին ինքնակամ կառուցված 77,76 քմ մակերեսով շինությունները համարել օրինական:

2.Հաշվի առնելով, որ S=50,7 ք.մ.մակերեսով այգետնակի կիսանկուղը, S=21,73 ք.մ.մակերեսով բաց պատշգամբը, S=1,21ք.մ մակերեսով աստիճանավանդակը և S=4,12 ք.մ.մակերեսով պարիսպն ինքնակամ կառուցվել են 2001 թվականի մայիսի 15-ից առաջ, ապա նրանց օրինականացման համար վճար չգանձել:

3. Ճանաչել Եփրեմ Նիկոլայի Ղազարյանի սեփականության իրավունքը վերջինիս պատկանող Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նուռնուս համայնքի ,,Սևան,, այգեգործական ընկերության 6-րդ տեղամասի թիվ 26 հասցեում գտնվող 490քմ-ից ավել օգտագործվող 65,99 քմ հողամասի նկատմամբ՝ այն անհատույց տրամադրելով իրեն.

4.Հողամասին և այգետանը տրամադրել իրավաբանական հասցե. Հայաստանի Հանրապետություն, Կոտայքի
մարզ, Նուռնուս համայնք, ,,Սևան,, թաղամաս, 6-րդ փողոց թիվ 26:

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄՆԱՑԱԿԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

Գ.Նուռնուս
15 սեպտեմբերի 2017թ.